

«ԱՂԲԻՒՐԻ» ՅԱՒԵԼՒԱԾ

ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ
ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 14 Կիրակի 4 ապրիլ | Զորրորդ տարի 1893

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է «**ԱՂԲԻՒՐԻ**» եւ «**ՏԱՐԱԶԻ**» 1893 *թ.* ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

*Մեր բաժանորդներից ընծաներ կը ստանան միայն «ԱՂԲԻՒՐ» և «ՏԱՐԱԶ» ի միասին ստացողները
իսկ միայն «ԱՂԲԻՒՐ» կամ «ՏԱՐԱԶ» ստացողները ոչ մի պրէմիա չեն ստանալ։*
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ *մեր առաջին նւէրը՝* ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ *մեծադիր պատկերը։*

ՔԻՒԼՀԱՆ-ԲԷՅԻ

ՊԱՏԿԵՐ

Ա.

Իւսկիւդարի Սէլամսըզ թաղի և Չինգեանոսների փողոցի մէջ գտնւում է Ղափուլար աղասու բանուկ բաղնիսը, որը նշանաւոր է իր անուշ ջըրով։ Այդտեղ է յաճախում ժողովրդի մեծ մասը և որովհետև սովորականից աւելի թանգ է գինը, շաբաթական երկու անգամ բաղնիս գնացող միւսլիմներին ձեռնտու չը լինելով, հայի բաղնիս է համարւում։ Որքան որ բաղդաւոր էր այդ բաղնիսի տէրը՝ Խօջա Իդրիսը իր ստացած ահագին քրէհով, որքան որ կապալառուի, բաղնիսպանների և քիսաչիների օգուտը մեծ էր, այնքան թշուառ և այնքան անտանելի էր այդ բաղնիսի քիւլհանջու (մոխրալան—кочегаръ) վիճակը։ Քիւլհանջին, որի աշխատութիւնը ամենից ծանր և ամենից անտանելի էր, պարտաւորուած էր ամեն օր երկու անգամ ծխանի մոխիրը դուրս քաշելու, փայտ կտրելու և ինչքան էր պէտք բաղնիսը տաքացնելու համար, վառելու բոլորակ ջրհորին լծւած ձին խնամելու և անդադար ժամերով հսկելու, որ չը կանգնի պառաւ կենդանին, համարեա շատ չնչին վարձ էր ստանում՝ ամսական յիսուն ղուրուշ։ Խեղճ մարդը այդ չնչին գումարով պիտի կշտանար, պիտի հագնէր, պիտի բոլոր պահանջները յագեցնէր։ Նա ոչ տուն ունէր, ո՛չ զատիկ, նրա համար ո՛չ պաս կար, ո՛չ ուտիք։

Դեռ լաւ էր, որ քիւլհանջիները տուն վարձ էլ չէին տալիս, նա էլ ապրում էր քիւլհանջիների նման քիւլհանում, որը մի հասարակ մարաքի պէս բան էր։ Յատակը հողից, տանիքի ծածքը ծխից սեւացած, պատերը առանց ծեփի, մի ձեռքի տարածութեան չափ տանիքի լուսամուտը առանց ապակու՝ բաց էր ամառ, ձմեռ, դուռը կատարեալ չէր խփւում, անբաժան ձիու աղբը մի անկիւնում հաւաքւած, փայտի ձողերը մի կողը շարւած, օջախից անդադար ճթրտոցով դուրս էր թռչում կրակը և խանգարում ջրահանին լծւած ձիու ոլորւելուց առաջացած աղմուկը։ Երբեմն քիւլհանջին լոլանոց կացինը ձեռքին փայտ էր կոտրում, երբեմն ջրհանի ճախարակներն էր եղում, երբեմն բաղնիսի պղինձն էր քննում և մերթ նստում էր օջախի դիմաց աթոռի նման սարքած քարի վրայ ու ծխում էր։ Ծխելիս նա աչքերը յառած էր լինում կրակի վրայ, միտքը աշխարհի, և յաճախ մռնչում էր և անհասկանալի ձայն էր թռչում նրա շրթունքերից։ Նրա դէմքը միշտ տխուր էր և երեսի խորշոմները քրտինքով ու փոշիով ծածկուած։ Քառասուն տարեան կը լինէր քիւլհանջի Ղազարը, թէև անխնամ մազերը, բեխերը սկսել էին սպիտակել, բայց ինքը մարմնով յաղթանդամ և հոգով բոլորովին երիտասարդ էր։

Ղազարին անունով չէին ճանաչում, նա յայտնի էր որպէս Քիւլհան-Բէյի (մոխրոցարանի-իշխան), և նրան փողոցում, թաղերում, կամ մի առանձին տեղ երբէք չէր կարելի տեսնել։ Բայց և այնպէս, թէև նա աշխարհից ճգնաւորի նման ձեռք էր քաշել, հեռացել, իսկ աշխարհը նրա պոչից չէր բաժանւում, նրա մօտ յաճախողների թիւը թէև շատ մեծ չէր, բայց քաղաքի ամեն կողմը անցած դարձածից նա շատ լաւ տեղեկութիւն ունէր։ Նա ապրելուց զզւած չէր, բայց ինչպէս ինքն ասում էր.

—Գիշատողների շրջանում չէր ցանկանում կեանք վարել։

Մի առաւօտ գործերը պրծնելուց յետոյ իր սովորական տեղը նստած ծխում էր, երբ քիւլհանի դուռը բացւեց, մի միջահասակ, ոչ շատ մաշւած շորերով մարդ ներս մտաւ և մօտենալով բարևեց ու նստեց օջախի կուշտը, Ղազարի դէմուդէմ։ Քիւլհան-Բէյը առանց շարժւելու բարևը ընդունելուց յետոյ, դարձեալ լուռ ընկղմած էր իր մտածութիւնների մէջ։ Ներս մտնողը բնակարանի հետ ծանօթ չէր երևում, բայց նրա շարժումները բոլորովին ազատ էին։ Նստելուց յետոյ երկուսն էլ անմռունչ ձեռքերը գլխները տանելով կրկնակի բարևեցին, առանց ընդհատելու լռութիւնը։ Այս ձևականութիւնից յետոյ իրար վրայ մի այնպիսի հայեացք գցեցին, որ կարծես թէ ցանկանում էին իրար հարցնել իրանց մասին։ Նորեկը ծխախոտի տուփը հանեց և սկսեց մի սիգարա փաթաթել։ Նա սիգարետը շինելիս մէկ-մէկ աչքի տակով նայում էր քիւլհանջու վրայ, որն անթարթ մտիկ էր տալիս վառարանի ահաւոր բոցերին։ Ինչպէս երևում էր, այդ այցելութիւնը այնքան դուր չեկաւ քիւլհանջիին և նա վերջապէս գայրոյթը չը կարողանալով զսպել, ասաց.

—Հա՛ն, ի՞նչ ես իմացել, Մկօ, աս վախտն ի՞նչ գործ ունես դու աստեղ։ — Մկօն չը կարողացաւ խօսել և աչքերը այնպէս յառեց քիւլհանջու երեսին, որ կարծես ուզում էր ասել, մի՞թէ չը գիտես։

Առժամանակ դարձեալ լռեցին։ Այդ միջոցին վեր կացաւ տեղից քիւլհանջին և բարձրանալով սանդուխքներից՝ մտիկ տւեց բաղնիսի պղնձին ու ասաց.

— Աս անիծւածն ալ լցւելիք չունի, քսան տարի է կը լցնեմ, կը լցնեմ՝ նորէն դարտակ, նորէն դարտակ։ Ահա իմ էլ խազնաս *) (կասսա). Ի՞նչ ֆարղ (տարբերութիւն) կայ սոր ու Ղալաթայի սառրաֆների, Բէզէզ-Խանի բէզիրգեանների ու մալիէի սնդուկների մէջ, անոնցն ալ դարդակ իմինիս պէս, անոնք ալ տարին տասներկու ամիս ինձի պէս կըլցնեն, կը լցնեն՝ չեն խալսիլ։ Բանն անտեղ է, որ անոնք մարդու սիրտը վառելով ծոցերն ու ջէբերը կը դարտկեն ու կը լցնեն իրանց սընդուկները, ամա ես ջուրի մէջի ճիճուները կը խաշեմ։ Ֆարղն (տարբերութիւնը) անտեղ է, որ անոնց մատաղները լեզու ունին կուլան, կերերան, կը պոռան, ամա իմ ճիճուներուս ձայնը մարդու ականջ չի հասնի։ Մէկ ալ որ իմ եռցուցած ջուրս մարդոց կը ծառայէ, ամմա ադ անիծածներուն փողը սատանոց կուրախացնէ։

Մկօն մռայլ լսում էր քիւլհանջու փիլիսոփայութիւնը և չէր համարձակւում շշունջով, հազալով անգամ նրան ընդհատել։ Քիւլհանջին գործը վերջացնելուց յետոյ եկաւ և իր նախկին տեղը տեղաւորելով ասաց.

—Ի՞նչ դարդ ունես, ի՞նչ ես սֆաթ (դէմքդ) կախել, ի՞նչի ես պապանձւել։

— Ի՞նչ խօսեմ, չե՞ս գիտեր, ասաց անլսելի կերպով Մկօն։

—Ի՞նչ, ի՞նչ է եղել։

—Ալ ի՞նչ պիտի ըլլայ, կացինդ վերցուր, զարկ հոգիս առ պրծնեմ, ազատւեմ աս նեղութիւններէն։

—Կացինն ի՞նչ պէտք է, էլ, գնա՛. անձայն, անծպտուն ընկի՛ր ջրի խազնան, կը խաշիս, կազատւիս։ Ատոր համար ալ ի՞նչ դարդ կընես։

—Է՛հ, դարդ չունես, ցաւ չունես, մանր ու խոշորդ տունը քաղցած չեն, խանութդ չեն մէօհրել (կնքել), տանդ շէյ շալաքը չեն ծախել, պատիւդ չամուրը չեն գցել, դուշմաններդ ետևէդ քեզ չեն ծաղրել, դատաւորները բանտի մութ զնդաններով քեզ չեն վախցուցել, հալբաթ որ հանաք ալ կընես, քիչ մալ ատել։ Ու՞թն ամիս է հէչ մէկ օր եկար

---

*) Տաճկաստանում բաղնիսների կաթսան անւանում է «Խազնա»։

Յովհաննէս Մկրտչի գլխատումը

հարցուցի՛ր, թէ—Մկօ, մեռա՞ր, ապրա՞ր, տունդ ի՛նչ կայ, ի՛նչ չը կայ։

—Դարդ մի՛ ըներ, ութն ամիս որ դիմացար, ամիս մալ կը դիմանաս։ Մէկ ամսից եա մանչ, եա աղջիկ կը ծնես, ալ ատոր համար մտմտալս, հարց ու փորձս գիտէր։

—Ծաղնի՛ր, դու ալ ծաղրէ՛ր.

—Ի՞նչ ծաղրեմ, աղբա՛ր, քսան տարի է, որ ես աս քիւլհանում կ՚ապրիմ, մէկ օր ներս մտած ունե՞ս, մէկ օր դու հարցուցած կա՞ս, Ղազար ինչպէ՞ս ես, լաւ ե՞ս, գործերդ ինչպէ՞ս են։

—Քու բանդ ուրիշ, աղբար, քեզ հետ ո՞վ գլուխ ունի, դու վարժատնէն քիւլհան մտար, ո՞վ կրցաւ քեզի խելք հասկցնել։ Ես քեզ ի՛նչ խօսէի, որ դու ամեն տեղ կը բոռայիր,—քիւլհանը սուլթանի թախտի հետ չեմ փոխիլ։

—Նորէն ադ կը բոռամ, աղբա՛ր, քիւլհանի մէջ ալ պիտի մեռնիմ։ Ամմա դու հարցնէիր, փնտրէիր, օր մը քննէիր, պատճառը իմանայիր, չէ՞ր ըլլար։

—Քեզ հետ ի՛նչ խօսէի, որ դու աշխարհքի երեսին մարդու չէիր հաւնիլ, ամմա ինքդ քիւլհանջութիւնն ալ ձեռքից չէին բաց թողնիլ։ Մարդ տասը գլուխ ունենար, քեզ հետ խօսելու սիրտ չէր ըներ։

—Հիմա ադպէս կը խօսիս, ամմա որ մտածէիր, թէ աս մարդը ինչի՞ հեռու կը փախչի մարդոցմէ, անժամանակ դու ալ աս օրը չէիր ընկնի, քիւլհանջու օգնութեանը չէիր կարօտի։ «Քեզ ո՞վ ըսաց դաբաղ դառնաս, մկի մորթին կարօտ ըլլաս»։ Ի՞նչ ըսեմ, ի՛նչ ընեմ թէ փող պէտք է, երեկ ամսական տուին, անտեղ վաթսուն ղուրուշ կայ, վերցուր տար։

—Ադքան փողի պէտք չունիմ, մարդու պէտք ունիմ, դու գիտես ինձի պիտի ազատես աս կրակէն։ Թէ որ իմ գլխուս փորձանքմ՝ գայ, իննը հոգի մանր ու խոշորս վրադ պիտի մնայ։ Քիզնէն ջոկ երկնքի տակ ո՛չ ազգական ունիմ, ո՛չ բարեկամ։

—Հպա ուրտե՞ղ են ան ընկերներդ, բարեկամներդ, որոնց հետ տարէն տասներկու ամիս քէֆի մէջ էիր, ան շուն շա՛ն որդիք, որոնց հետ կերար ու լափեցիր պապիդ կարողութիւնը։ Մկօ՛, Մկօ՛, դու մեղք չ՚ունիս, համմա խելք ալ չունիս։ Սիրտդ գէշ չէ, չարութիւն չը կայ թաղւած անոր մէջ, ամմա ի՛նչ ըրած, որ... Ահա՛ հօրդ ըրածի փոխարէն։ Նա իրեն խելքով ինձի կողոպտեց, զրկեց, աղբօր բաժինը կուլ տւաւ, ի՛նչ է, որդին ապահովէ, ամմա ահա անոր ապահովութիւնը։ Դու շատ լաւ գիտես, խիստ լաւ կը հասկանաս հիմի, ի՛նչքան հիմնաւոր էր անոր թողած ապահովութիւնը։ Ինձ զրկեց և երբ ես զրկանքի ահաւորութիւնն հասկացայ, փնտրեցի և գտայ անպէս գործ մը, որ մարդ ինձի ալ չը կրնայ զրկել։ Հէչ բան որ չունենամ, ալ ինչէ՞ն ինձի պիտի զրկեն, աղբա՛ր։ Մալ ունեցողը թող վախենայ, գլուխը ծռէ փաշայի, բոշայի ոտներու տակ։

Դու որ խելահաս եղար, հօրդ մեռնելուց յետոյ ձեռք առիր մեր պապական կարողութիւնը, ինչո՞ւ չը մտածեցի՛ր, որ ադ միւլքերէն Ղազարն ալ բաժին ունի։ Շիտակ է, թէ որ դու տալու ալ ըլլայիր, ես չէի ընդունիլ, ամմա մտքէդ անգամ չանցաւ... Դու ալ անոնց պէս սուտ էշ դարձար և անպէս ցուց կուտաս դեռ ասօրս թէ՝ բանից խաբար չես...

—Ղազա՛ր, ախա՛ր դու օրական հազար քիւֆիւրտ կը թափէիր մալ ու միւլք ժողվողներու գլխուն, ես ի՛նչ...

—Հա՛ն, թէ որ ինձէն պատճառներն հարցնէիր, դուն ալ քիւլհանջի կը դառնայիր, ամմա մէջքդ սովոր չէիր գետնի վրայ պառկելու, ծխի մէջ չէիր կրնար ման գալ, չոր հացով փորդ չէիր կրնար կշտացնել, շալ չէիր կրնար հագնել, ադոր համար ալ ինձնի չէիր մօտենար։ Դէհ, գնա՛ հիմի ան քու ընկերուդ քով, թո՛ղ քեզի բաժին տան իրենց կարողութենէն։

—Հոգիդ սիրես Ղազար, ես քու սիրտդ չունեմ, ադ քու հին երկար, բարակ ճառերդ թո՛ղ, հիմի ճարմ գտիր ինձի ազատելու։

—Ի՞նչ ընիմ, ձեռնէս ի՛նչ կուգայ։

—Մոլլա Իդրեսէն, աս բաղնիքի տիրոջէն հազար լիրայ առինք և գրաւ դրինք տունն ալ, խանութն ալ, խանութի ապրանքը ալ։ Կռւի պատճառով գործերս ձախ գնաց, չը կրցի երեք տարի տոկոսն ալ է տալ։ Կոնսոլիտներուս տոկոսն ալ չը տուին, նեղն ինկած իննսունը երեք զեղչով ծախեցի։ Տոկոս տոկոսի վրայ չորս տարւան մէջ երկու հազար չորս հարիւր լիրայի հասաւ պարտքս։ Ես ա՛լ շւարեցայ, տեսայ որ տունն ու խանութը չեմ կրնայ ազատել, միջի ապրանքն ալ է, ըսի ազատեմ։ Վեր առի, հաւատացի Աբիկեան Սիմոնին ան ալ կլեց ու բերանն ալ սրբեց։ Մոլլա Իդրիսը գանգատ տւեց, տունս ու խանութս մէզաթի (աճուրդի) էջէն երկու հազար երկու հարիւր լիրայի գնեց։ Ադ հերիք չէր, հիմի ալ ապրանքների համար նոր գանգատ է տւել և կուզէ ինձ ինչպէս գող նստեցնել։ Տունը ի՛նչ օրն է քեզ ի՛նչ պատմեմ։ Վրաս խղճացին, Բէզէստանը*) ամսական հինգ ոսկով տեղ տուին։ Թէ նստեցնեն, ադ տեղն ալ պիտի կորցնեմ, գլուխս ալ, մանր ու խոշորս ալ…

---

*) Բազազ—խանա կամ մեծ վաճառանոց։

Մկօն չը կարողացաւ խօսել, արտասուքները գլորւեցին նրա աչքերից։ Քիւլհան-Բէյին էլ խիստ խռժռւեց դէմքը և խորասուզւեց դառն մտքերով։ Դարձեալ լռութիւնը տիրեց, միայն ձիւ ոտնաձայնն ու ջրհանի ճախարակներու սրսրոցներըն էր լսւում։ Օջախից ջերմութիւնը տարածւում էր և տաքացնում միայն երկու եղբօր որդոյ դէմքերը, իսկ քիւլհանում բաւական չէր բնական խոնաւութիւնը, քամին ամեն կողմից թափում էր ձիւնի հատիկներ։ Այս միջոցին մի քիւաչի ներս եկաւ ու գոռաց.

—Ասօր ի՞նչ է եղել, Ղազար աղբա՛ր, ջուրը չը տաքցաւ, հերիք ջուր քաշես։

Ղազարը անմռունչ բարձրացաւ, ձին արձակելով տարաւ կապեց ու առաջը դարի լըցրեց։ Մկօն անդադար ծխում էր ու հառաչում։ Վերջապէս Քիւլհան-Բէյին ազատւելով գործից՝ եկաւ, նստաւ իր տեղը և ասաց.

—Հիմի ի՞նչ կըսես, ի՞նչ ընեմ.

—Չեմ գիտէր, դու գիտես. ինձ ազատէ բանտէն…

—Ինչպէ՞ս.

—Ինչպէս որ աշխարհքին նեղւածներին կազատես…

—Մօլլա Իդրիսը ան վախկոտներէն չէ, որ «բօ՛» ընելով հոգին առնես։ Ան սատկի փարա մ', չի բաշխիլ։

—Մէջլիսի ըէիսին տես (դատարանի նախագահին)։

—Անոնք ալ կը վախնան Իդրիսից.

—Ճարը գտիր, ասաց կակազելով Մկօն։

—Հնար չը կայ։ Գնա՛ երկու, երեք ամիս նստի՛ր, իշու արքայութեան համը տես։

—Տունը՞, ասաց խեղդւած ձայնով Մկօն։

—Տունը ես կը պահեմ։ Ատոր հոգը մ'ընէր։

—Օ՜ֆ, ասաց հառաչելով Մկօն և աչքերը գետնին յառեց։

Դարձեալ լռութիւնը տիրեց, դարձեալ տխուր մտքերը պաշարեցին երկու եղբօր զաւակներին։ Քիւլհան-Բէյին պատկերացնելով հօր և իր տաժանելի անցեալը, հօրեղբօր և նրա որդու անսահման շռայլութիւնները, բոլորի ներկայ վիճակը, մտածում էր ծփալով դառն մտքերի անեզր ովկեանում։ Զգում էր Մկօի սարսափելի կացութիւնը, մտնում էր նրա հոգեկան աշխարհը, բայց իր բուռն կըրքերը, Իդրիսի ահեղ ոյժը ստիպում էին, որ նա համաձայնի Մկօի մի առ ժամանակ այդ անարգ վիճակին ենթարկւելուն։

—Անհնարին է, Մկօ՛, խօսք չեմ կրնար տալ, ամմա կաշխատեմ համոզել Մօլլա Իդրիսին։ Թէ խօսքս չընդունի, չեմ կրնայ ուրիշ բան ընել։

—Դու մէկ տես, թէ խօսք չը տայ՝ վերջը կը մտածենք։

ԱՏՐՊԵՏԵԱՆ

(Կը շարունակւի)

ՔԱՄԻ

Փչում է քամին, սոսկալի ձայնը
Առատ մտքեր է իմ մէջ զարթեցնում,
Չի փակւում նրա ազա՛տ բերանը՝
Համաշխարհային մի վիշտ է երգում…
Բոլոր տառատող դասերը նրան
Դիմել են մի օր, սիրով խնդրել են՝
«Քամի՛, մեր սրտի վիշտը խղաձայն
Ա՛ռ և միացո՛ւր, ամեն տեղ հնչւեն…»
Եւ նա այն օրից, ուր որ անցնում է,
Խեղճ ու աղքատի երգն է ժողովում
Եւ այդ երգերը իրար հիւսում է
Եւ մի տխրազգած մեղեդի կազմում»…
Լսում եմ նստած՝ այդ վիշտն ու կսկիծ,
Որ խիստ է զարկում իմ յուզւած սրտիս.
«Քամի՛, գնա՛ զարկ հարուստի դուռն,
Պատուհանի տակ փչէ մեծատան»…

Յ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՍԿԱՆԴԻՆԱՒԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեղեցիկ երկիր է Սկանդինաւիան։

Հիւսիսային Եւրոպայի սառը ծայրում ընկած է այդ երկիրը։ Բնութեան այդ գեղեցիկ վայրերին տարւայ մեծագոյն մասը տիրում է ձիւների և սառուցների թագաւորութիւնը։ Այնտեղ գարունը և մանաւանդ ամառը նոյնքան և աւելի կարճ է, քան ձմեռը մեր երջանիկ հարաւում։ Ծովերի, լճերի և ցամաքների վրայ ճանապարհորդելով Սկանդինաւիան կազմող Շւէդ, Նօրւէգ, Ֆինլանդ և Դանմարգ չորս երկիրներով, դուք իբր կովկասեցի կըզգայմւէք նրա վերին աստիճանի գեղարւեստական վայրերով.— վայրե՛ր, որոնք այնպէս ոգեւորել են Ռունէբերգ, Անդէրսէն, Իբսէն, Բիորնսօն և այլ շատ բանաստեղծներին։ Ճշմարիտ է, այդ վայրերը միանման են, — այսինքն անվերջ գրանիտեայ բլուրներ, բայց խիտ անտառներով զարդարւած և անհամար լճակներ գրանիտային ափերով և ժայռերով պատած։ Նրանց լեզւում Ֆինլանդիան կոչւում է հազար լճերի երկիր։ Իսկ ինչ զմայլելի



Թուրք մօլլա

տեսարաններ են ներկայացնում Նորւեգիայ՝ փիյորդները իրանց ափերը մռայլ կերպով հովանաւորող նեղ և խոր ձգւած ծալծալ ժայռերից կազմած լեռներով, անհամար փոքրիկ կղզիները, որոնք ինչպէս աստղերը երկնքում, այնպէս ցրւած են այդ չորս երկիրների ափերով, իսկ յանկարծակի յայտնւող կուսական լճերի հայելին իրանց անտառապատ ափերով, և Վալհալլա և այլ լեռները, որոնք այնքան գեղեցիկ նիւթեր են մատակարարում նրանց սագաներին, այդ բոլորը քանի՝ քանի բանաստեղծների է ոգևորել. Նոյն իսկ շւէդական Կարլ XV-րդ նկարիչ թագաւորին։ Նապոլէոնեան մարշալ, Բեռնադոտի այդ ազնիւ շառաւիղը, բնութեան այդ սիրահար արքան քանի անգամ զօրախաղերից և պարադներից զզւած վերադարձել է և շտապել հայրենի երկրի գիրկը, անձնատուր լինելու նրա գաղտնիքներին։ Սակայն անողոք բնութիւնը տւել է Սկանդինաւիային մի մռայլոտ երկինք։ Արևի ջերմութիւնը այնտեղ հազւադիւտ է և զարմանալի չէ, որ մինչդեռ արևելքի ոգևորւած բանաստեղծը երգում է մելամաղձոտ «Գարունն է եկել», Սկանդինաւիայի բանաստեղծը ընդհակառակը ջերմ փափագով երգում է «Sommar ljus, sommar lyft» («ամառային լոյս, ամառային օդ»)։ Երկիրը հարուստ չէ, բերքերը վատ, պտուղները քիչ. այնտեղ չէ բուսնում խաղող, այնտեղ չըկայ նուռը, չըկայ և շատ բան. մինչ իսկ աղքատ երկիր է, բայց հայրենասէր սկանդինաւիացին երգում է.

«Մեր հայրենիք թէև աղքատ,
«Նրա համար, որ սիրում է լոկ ոսկի,
«Մեր հայրենիք թէև աղքատ
«Բայց մեր սրտին սիրելի»։

Տւէք Սկանդինաւիային մեր Կովկասի ջերմ արևը և նրա պայծառ երկինքը, և նա կըդառնայ այն երկրային դրախտը, որի համար մենք գաղափար չունենք։ Միակ Ստոկհօլմի դիւթիչ տեսարանները այնքան զմայլելի են, որ նրան նայելով՝ դուք մոռանում էք հռչակաւոր Պօլիսը։ Սակայն այստեղ երկնքին երբէք չի կարելի հաւատալ, մի ամառւայ օրում յանկարծ կիզիչ արև, յետոյ մի ժամ չանցած անձրև, յետոյ նորից պարզ և ջինջ երկինք, յետոյ նորից ամպեր և այդ անվերջ և միշտ։

Գեղեցիկ է և Սկանդինաւիայի ժողովուրդը։

Մտէք յետին գիւղը և դուք իսկոյն կըտեսնէք այն ցանկալի ներդաշնակութիւնը կուլտուրայի և բնութեան, ժողովրդի կենցաղավարութեան և երկրի մէջ։ Կարծէք ամեն ինչ այստեղ մշակւած է, ամեն ինչ տաշւած և հարթած։ Մնում է որ մարդիկ անեն միայն այն, որ անհրաժեշտ է և միայն այդեն։ Մի փոքրիկ դիտողութիւն և դուք կասէք. «այստեղ ամեն ինչ կատարելագործւած է, այստեղ մարդը երջանիկ է, նա ունի մարդավարի կեանք», իսկ եթէ համեմատութիւնների մէջ մտնէք, ձեր աշխարհը կը մոռանաք։ Այո, այս մեզ անծանօթ երկիրը այնքան է առաջ գնացել զարգացող կեանքի ասպարէզում, որ եւրոպական ազգերի իսկ նախանձն է յարուցանում…

Վաղուց է այստեղ դադարել է Մարսի ձայնը. այստեղ այժմ թագաւորում է խաղաղութիւնը, ուսում, գիտութիւն և կատարելագործութիւն ծնող խաղաղութիւնը։

Այստեղ ծաղկում է արհեստը, նկարչութիւնը, բեմը, բանաստեղծութիւնը և մայրենի գրականութիւնը, որը կարճ ժամանակում մարդկութեան նւիրեց հայերիս եւս ոչ անծանօթ Անդէրսէն, Էդգրէն Լեֆլէր, Իբսէն, Բյեօրնսօն և Ռունէբէրգ տաղանդներին։ Մինչ իսկ շւեդացոց այժմեան թագաւոր Օսկար II-րդը պարապում է գրականութեամբ և գիտութիւններով։ Այդ հռչակաւոր գրողները հզօր գրչով յարուցին մի շարք հասարակական հարցեր, նրանք մեծացրին իրանց ազգի պակասութիւնները, հարւածեցին նրա հիւանդոտ տեղերը և նրանք նոյն հասարակութիւններից գրկաբաց ընդունեցին. իսկ իր մարգարէներին և ուսուցիչներին չը հալածող ժողովուրդը բարձրանում է բարոյապէս։

Այդ չորս ազգերի մէջ չնչին բացառութեամբ տիրում է մի բարոյական կապ և միութիւն. և ով որ էլ որ լինի՝ եթէ համարձակւում է քարոզել այդ միութեան դէմ, նա կորցնում է թէկուզ մինչև աստղերը բարձրացրած իր վարկը և պատիւը, մինչև որ չը զղջայ *)։

Սկանդինաւիայի ժողովուրդը մի ընտանիք է կազմում. սրանց մէջ չէ նկատւում ոչ լեզուների, ոչ կրօնների, ոչ համոզմունքների խտրութիւն։ Ցեղական ատելութեան տեղ տիրում է մի եղբայրական սէր. այդ ամենի պատճառը երևի կլիմայական միատեսակութիւնն է, երկրի միատեսակութիւնը, թէ արտաքին ճնշումը, գուցէ և բոլորը միասին։ Նրանց գրականութիւնը և բեմը միմեանց հետ ձուլւած է. նրանց բարքերը և կենցաղավարութիւնը ոչնչով չէ զանազանւում միմեանցից։ Ամենամեծ դեր է կատարում նրանց մէջ լրագրութիւնը, որը ծառայում է ընդհանուր Սկանդինաւիայի շահերին և որը այնքան ժողովրդականացած է, որ նա մուտք ունի մինչև իսկ ամենայետին գիւղացու տունը։ Ամենափոքրիկ քաղաքը և աւանը անգամ ունի իր տեղական թերթը։

Երկրի մէջ հաղորդակցութիւնը շատ հեշտացրած է անհամար շոգենաւակներով և երկաթուղիով։ Հեռախօսը այնտեղ աւելի է տարածւած, քան թէ մեզնում լրագիրը. այնքան նա յարմարեցրած և էժանացրած է։ Բազմաթիւ քաղաքների ժողովրդները քաղաքից քաղաք և տէրութիւնից տէրութիւն խօսում են միմեանց հետ հեռախօսներով. այդպէս Դանիան Շւեդիայի, և վերջինը Նորւեգիայի հետ։ Հեռախօսական գործը այնքան կատարելագործւած է այնտեղ, որ մինչև իսկ անցեալ 92 թւին Ֆրանսիայից եկել էին Ստոկհօլմ այդ արհեստը ուսումնասիրելու։

Գրագիտութիւնը այնտեղ զարմանալի քայլեր է արել. մինչ մեզնում ազգաբնակութեան հազարին 50 գրագէտ է ընկնում և այն էլ տեղ տեղ միայն, Սկանդինաւիայում գրագէտների տոկոսը հաւասար է հազարին 750 և աւել, մի թիւ՝ որից յետոյ հազարին հասնելը բոլորովին դժւար չէ։

Արհեստները զարգացած է այնտեղ այն չափով, որ նրանք նաւագործութեան մէջ մրցում են եւրոպական մեծ տէրութիւնների հետ. այդպէս միայն Կասպեան

---

*) Այս բոպէիս Սկանդինաւիան և Զւէյցարիան միակ երկիրներն են, որտեղ ազգութիւնները պահպանելով իրենց առանձնայատկութիւնները, ապրում են առանց փոխադարձաբար ճնշելու, օգնելով իրար քաղաքակրթապէս առաջանալու։

ծովի վրայ տասնեակներով կարելի է համարել այն շոգենաւերը, որոնք շինուած են Օբօյում, Մութալայում և Ստոկհօլմում։ Բազմաթիւ մանր արհեստների մէջ նրանք շատերից բարձր են, իսկ ընդհանրապէս հաւասար մրցակից, օրինակ ատաղձագործութիւնը, ոսկեգործութիւնը, կաշեգործութիւնը և ձեռնագործութիւնը։ Իսկ նաւագնացութեան մէջ Սկանդինաւացիք պատուաւոր տեղ են բռնում։

Կանայք Սկանդինաւիայում նոյնքան աշխատասէր են, որքան և իրանց տղամարդիկը։ Բացի այն որ գեղարուեստական ասպարիզում փայլում են բազմաթիւ կին նկարիչներ, գրողներ, դերասանուհիներ, երգչուհիներ, բազմաթիւ են և գործակատարուհիներ, կօնտօրիստներ, բանկերի և գրասենեակների մէջ, հեռախօսարանների և հեռագրատուների պաշտօնեաներ. իմ կարծիքով այդ բանին մասամբ նպաստում է այն հանգամանքը, որ Սկանդինաւիայում թւով կանայք աւելի շատ են քան տղամարդիկ։ Սկանդինաւիայում կանայք համեմատաբար աւելի հաւասար չափով են զարգացած իրանց տղամարդկանցից, քան որ և է ուրիշ երկրում, գուցէ ես չափազանցնում եմ, բայց երևակայեցէք այնտեղ կեանքի ամեն քայլում դուք շփւում էք կանանց հետ, մաժողներ (մասսաժիստ), նաւերի սպասաւորուհիներ, լուսանկարչուհիներ, և այդ ամենքի հետ դուք գործ ունենալով իսկոյն նկատում էք թէ որպիսի ճշտութիւն և լրջութիւն, սիրալիրութիւն և պատշաճ քաղաքավարութիւն է տիրում նրանց պաշտօնավարութեան մէջ։ Ինձ յաճախ պատահել է տեսնել, պարտէզի խոտերը մկրատով կտրող կինը մի րոպէ թարմ լրագիր կարդալիս. կամ թէ գիւղացի կին սայլապանին լրագիրը ձեռին կամ բաղնիսի մէջ լողացնող կնոջը կարդալիս և այլն. Նրանք շատ ուրախութեամբ և աւելի հեշտութեամբ լրագրի փող կըտան, քան թէ կօճակի թելի և շաքարեղէնի։ Իսկ նրանց առասպելական մաքրասիրութիւնը պէտք է մարդ իր սեփական աչքերով տեսնէ որ հաւատայ։

Սկանդինաւիացիք եթէ գիտեն լաւ աշխատել, բայց գիտեն և լաւ ուրախանալ, և պէտք է ասել նրանց երկրի վարչութիւնները ոչինչ չեն խնայում իրանց ժողովրդի համար ամենայարմար զբօսավայրեր կառուցանելու, թէ կղզիների և թէ ցամաքների վրայ։ Կիրակին այստեղ պահւում է ամենայն սրբութեամբ. սակայն կրօնասիրութիւնը այստեղ ևս կանանց սեփականութիւն է մնացել. և կարելի է ասել Սկանդինաւացի կինը հասարակական կեանքի համար գլխաւորապէս այնտեղ է դաստիարակւում։ Բնաւորութեամբ սրանք աւելի նման են Ֆրանսիացիներին, քան թէ գերմանացիներին. ի դէպ՝ սրանք գերմանացիներին շատ էլ չեն սիրում, իսկ սրանց կանայք գերմանացի կանանց խելքի մասին նպաստաւոր կարծիքի չեն։

Սկանդինաւացու աշխատանքը գնահատելու համար, պէտք է տեսնել թէ ինչպէս են նրանք երկրի կարծր որձաքարերը կտրտում, ուղիներ բռնում, ժայռերի վրայ խոտեր ցանում, ծառեր տնկում, ջրանցքներ տանում և բնակչութիւններ հաստատում, թէ ինչպիսի ճաշակով են կառուցանում իրանց տները, ամարանոցները և լճերի ափին իրանց լողարանները։ Այդ ամենը տեսնելով, զգում էք ձեզ կանգնած մի գեղեցիկ պատկերի առաջ,—նրա ներկերի գրաւչութիւնից, տեսարանների խորհրդաւորութիւններից զմայլւում էք. ահա խորութեան և մշուշի մէջ անյայտանում է լճի մի ծայրը, այստեղ աջ ափին բարձրանում է կանաչապատ ծառերից բլուրը, նրա ճեղքւածով գնում է փրփրալից առուն և անհետանում փոքրիկ ջրաղացի մէջ. առուի վրայով նեղ փայտեայ կամուրջով անցնում է մատաղահաս հոլանի կռներով սկանդինաւուհին, լճի վրայ լողում են բադեր, իսկ հեռւում փոքրիկ նաւակում սիրահարներ. նեղ կածանով ծերունին փայտին յենւելով և ծխելով՝ դիմում է դէպի ջրաղաց, նրա ետևից պոչը ոլորած փոքրիկ շունը։ Լճի միւս կողմում դաշտ, որի վրայ ցրւած են խառնիճաղանճ անասուններ, խայտաճամուկ հագւած կանայք, քաղաքացի արիստոկրատները ցիլինդրով, կանայք արեւակալով, դիմացը հոյակապ երկյարկանի տախտակեայ գեղեցիկ վիլլա, պատշգամբով և կամարազարդ մուտքով։ Այստեղ մաքուր օդ, պայծառ արև, այնտեղ հորիզոնի վրայ ամպերի քուլաներ։

Սկանդինաւացին բուռն եռանդով հետաքրքրւում է իր հասարակական հարցերով, և ոչ մի ընկերութիւն որ բարեգործական է, անգործ չէ մնում և անյաջողութիւն չէ ունենում, այնտեղ գործը ոչ թէ սկսւում է տաք և գնալով սառչում, ո՛չ, ընդհակառակը, եթէ կարելի է ասել, սառը սկսւում է և գնալով տաքանում։ Ահա օրինակ, ինչպիսի ընկերութիւններ կան այնտեղ. գրողների ընկերութիւն, որ ունի սեփական գրավաճառանոց, սեփական տպարան և սեփական իսկ օրգան, (թէ որքան օրինակելի և օգտաւէտ է այդպիսի մի հիմնարկութիւն՝ լաւ գիտեն հայ աղքատ գրողները)։ Բանւորների միութիւն, որ ունի սեփական գործարան, սեփական բնակարաններ, ուտելեղէնի սեփական խանութներ և այլն։ Բանւորուհիների ընկերութիւն. դրանք ունենում են ժողովներ դասախօսութիւնների համար, գրագիտութիւնը իրանց շրջանների մէջ տարածելու, անգործների համար գործ ճարելու, խմբական երգեցողութիւն սովորելու համար։ Սկանդինաւացիք մանաւանդ շւեդացիք յայտնի են իբր լաւ երգողներ։ Յաճախ բանւորուհիների ընկերութեան անդամների երգեցիկ խումբը գնում է կոնցերտ տալու համար Ստոկհօլմից Հելսինգֆորս, Խրիստիանիայից Կոպէնհագէն և ընդհակառակը։ Դեռ Հելսինգֆորսում ես առիթ ունեցայ տեսնել մի կոնցերտում տեղական բանւորուհիների ընկերութեան երգեցիկ խումբը ուսանողների հետ խառն. Նրանք երգում էին այնքան նուրբ և մշակւած, որ մարդ մոռանում էր որ իր առաջ կանգնած են կոշտացած ձեռներով խոհարարներ, լւացարարներ և մաժողներ։ Նոյն կոնցերտում երգեցին Շւէդիայից եկած վեց գիւղացի օրիորդներ իրանց ազգային շորերով և առանց խմբապետի։

Սկանդինաւիայում նկատելի է միմիայն նրանց յատուկ և գուցէ ոչ մի երկրում տեղի չունեցող երևոյթ. ինտելլիգէնտ մարդիկ մեծ մտերմութեան մէջ են հասարակ ամբոխի հետ, և առհասարակ նրանց հետ շփւելը այնպէս դժւար չէ, նրանք անդադար շփւում են ամբոխի հետ, սովորեցնում են նրան, ձրի դասախօսում են, շատ անգամ նոյն իսկ բարեկամութիւն են անում։ Այդպէս Բեօրնսօնի դուռը բաց է ամեն մի գիւղացու համար։ Եւ ուրիշ անուն չի կարելի տալ Սկանդինաւացի զարգացած մարդուն, եթէ ոչ ժողովրդի բարեկամ, նոյն իսկ ժողովրդի հայր, այնքան են նրանք խնամում իրանց սարին դասակարգին, այնքան են հոգում նրա կարիքները լրացնելու համար, մի բան, որ համարեա մենք միշտ անխնայ պահանջում ենք ապրուստը անապահով հոգևորականից, մոռանալով կենսապահով ինտէլիգէնտին։

Հասարակական բոլոր խաւերը, ռամիկը, մշակը, բանւորը և բարձր արիստօկրատիան, գիտնականը, գեղարւեստագէտը և մի խօսքով ամենքը կազմում են մի մեծ ընտանիք, որի ամեն մի անդամի պակասութիւնը, կարիքը, ուրախութիւնը հաւասարապէս բաժանւում է բոլորի մէջ և հոգացւում. այս դէպքում օգնում է օրինակելի և ճիշտ վիճակագրութիւնը. օրինակ այս տարի Ֆինլանդիայում սով է, մի շաբաթւայ մէջ յայտնել է թէ ժողովուրդը ինչքան կարիք ունի և իսկոյն հաշւել են որ սենատը կըտայ այսքան, հանդանակութիւնը այսքան և ներկայացումները այսքան. և հաւատացած եղէք, որ այդ այնքան ճիշտ է հաշւած, որ մի կոպէկ անգամ նպատակից չի սպրդիր։

Ամեն տեղ փոխադարձ խնամատարութիւն. էլ չեմ ներկայացնում թռչւնների ձագերին խնամող մանուկների ընկերութիւնը, մաքրասիրական և առողջապահական հիմնարկութիւնները, օր. բաղնիսները, և այլն և այլն, հետաքրքիր ընթերցողը կարող կըլինէր շատ համեմատութիւններ անել մեր և նրանց մէջ։ Այո, հետաքրքրական է այդ՝ հիւսիսափայլի, հազար լճերի, հազար կղզիների՝ և ամառը գիշեր չըտեսնող երկիրը. սիրելի է նրա ժողովուրդը իր փառաւոր անցեալով և նախանձելի ներկայով։

ԱԼԷՔ. ԱԲԷԼԵԱՆՑ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

(Պուշկինից)

Անխիղճ նկարիչըն իւր կոշտ վրձինով
Հզօր Հանճարի գործն է մրոտում,
Եւ նրա վերայ նա անմիտ կերպով
Անպէտք մի նկար գծում, խազոտում։

Բայց օտար ներկը, չանցած շատ տարի,
Մաշւում, թափւում է ձկան թեփի պէս,
Եւ ահա դարձեալ գործը Հանճարի
Իւր նախկին փայլով գալիս է հանդէս։

Այդպէս ջնջւում են և իմ հէգ սրտից
Կրծքիս ծանրացած մոլորութիւններ.
Եւ այնտեղ ծնւում, զարթնում են նորից
Նախկին օրերիս պայծառ տեսիլներ։

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

4 յունւարի 1893 թ.
Մոսկւա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԱՅԳԻՆԵՐԸ

Գինեգործ պ. Գ. Նաւասարդեանը Վաղարշապատում կիրակի ամսի 7-ին, օրիորդաց դպրոցի դահլիճում ժամը 12-ին կարդաց մի դասախօսութիւն այգեգործութեան և գինեգործութեան մասին։ Պարոնը մի համառօտ տեսութիւնից յետոյ, ցոյց տւեց այգեգործութեան և գինեգործութեան օգուտը, բայց ցաւելով յարեց, որ այդ գործը առայժմ մեր մէջ չի կարող զարգանալ, որովհետև իւրաքանչիւր մարդ ուզում է օգտւել ուրիշի՝ հարևանի սեփականութիւնից նոյն իսկ ամենաազնիւ միջոցներով. այդ ապացուցանելու համար նա մատնացոյց արեց Վաղարշապատի մի քանի բարբարոսական տգեղ սովորութիւնները։ Վաղարշապատում սովորական երևոյթ է խաղողի որթերը և պտղատու ծառերը կտրատել, և կողոպտել վայրենաբար այգու պտուղները ու այդ ամենը մասամբ նրա համար է, որ լուծեն իրանց վրէժը մինչև անգամ ամենաչնչին անխոհեմութեան պատճառով։ Ոչ թէ միայն թշնամացած դրացին է փչացնում գիւղացու այգին, այլ և ինքը՝ այգետէրը, որը մեծ մասամբ անխնայաբար է վերաբերւում իր տունկերին։ Պարոնը ցոյց տըւեց որ ծառերը կտրատելը և դրա նման տգեղ սովորութիւնները ոչ միայն վնասում են այգետիրոջ, այլ նոյն իսկ ամբողջ հասարակութեան։

Ափսոս որ պ. դասախօսը մոռացաւ խօսել այդ՝ ընդհանրացած երևոյթի նպաստող հանգամանքների վրայ։ Անկասկած, մեր ժողովրդի՛ ոխակալութիւնը սովոր է արտայայտւել վայրենի գործողութիւններով, ինչպէս է հարևանի այգու վազերը, ծառերը կտրատելը։ Բայց այգիներ ոչնչացնելը, որ ընդհանուր է դառել այդ նահանգի մէջ, ուրիշ պատճառներ ևս ունի։ Իրանք այգետէրերը մի փոքր չափազանցութեան հասցրին այգեսիրութիւնն և այդ յափշտակութեանը յաջորդեց բամբակի ցանքսերով յափշտակութիւնը, քանի որ բամբակը վերջերս աւելի լաւ և հաստատ եկամուտ սկսեց տալ։ Գիւղացիք ոչ թէ միայն իրանց արտերը, այլ նոյն իսկ այգիները վերածում են բամբակի հանդերի. այդպիսով ի հարկէ այգեգործութիւնը խիստ վնաս է կրում, մանաւանդ որ հայ գիւղացիք ոչ լաւ գինի շինել գիտեն, ոչ էլ յարմարութիւններ ունեն գինիները ծախելու և տեղափոխելու։ Բամբակի առնողը ինքն է գալիս գիւղը, իսկ գինու համար գիւղացին ստիպւած է լինում ինքը մուշտարի որոնել, բամբակը Երևանում մաքրելու համար ճնշւում է և ուղտերով տեղափոխւում մինչև երկաթուղին ինչ եղանակ որ լինի, իսկ գինին ուղտերով ոչ ոք չի տեղափոխել և լաւ օրերի պիտի սպասեն։ Բացի այդ բոլորովին սխալւած չենք լինի, եթէ ասենք որ Վաղարշապատում, ինչպէս և շատ տեղ այս նահանգում այգիները ժողովրդի սեփականութիւն չեն. գրեթէ ամբողջ Վաղարշապատի այգիները սեփականութիւն է մի քանի վաշխառուների, որոնք ծանրաբեռնելով խեղճ ժողովրդին իրանց անտանելի տոկոսներով (24—30 տոկոս), խլում են նրանցից այգին, տունը, մի խօսքով բոլոր անշարժ կայքերը։ Չը կայ Վաղարշապատում մի մարդ, որ այդ հարստահարող վաշխառուների հասցրած հարւածներից զերծ լինի, չը կայ մի մարդ որ ծանրաբեռնւած չըլինի պարտքերով։ Այսպիսի յուսահատ դրութիւնը ստիպում է Վաղարշապատցոց նայել իր սեփականութեան վրայ, որպէս օտարի սեփականութիւն։ Վաղարշապատում ամենքից կարելի է լսել այս յուսահատ խօսքերը. «Ի՞նչ սրտով մշակեմ, քանի որ այսօր կամ վաղը ձեռքիցս առնելու են»։ Գիւղացին ամեն կերպ ուզում է օգտուել իր այգուց. նա ստանում է սըղոցը և կտրատում է իր ձեռքով տնկած, աչքի լոյսի պէս պահած պտղատու ծառերը, որովհետև այսօր կամ վաղն այգից ուրիշի ձեռք է անցնելու։ Այս հանգամանքըն ևս ուրիշ բարդութեանց հետ մեծ նշանակութիւն ունի Վաղարշապատի այգեգործութեան վիճակի համար։ Գ. Նաւասարդեանի չափազանց եռանդը չեղեց՝ նրան բուն նիւթից և նա ի միջի այլոց ցոյց տուեց Վաղարշապատի ուսումնարանի շինութեան ողբալի դրութիւնը և կարեկցաբար առաջարկեց հասարակութեան ապագայ բարեկարգ ուսումնարանի շինութեան ծրագիրը։

***

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՄՈՒՐՃ» 1893 Թ. Յունուարի, Փետրուարի և Մարտի № №

Պատասխանելով «Նովոէ Օբազրէնիէ» Թերթի աշխատակից Ш.-ին, որի կարծիքով մի ամսագրում ամենակարևորն է և ամենաէականը, «այսպէս կոչուած զուտ գրական բաժինը», «Մուրճը» № 1՝ պնդում է թէ «ամսագիրը, իւր նշանակութեան լայն մտքով, պէտք է ներկայացնի ժամանակակից կեանքի և գաղափարների մի օրգան». «մի հասարակական ամսագրի հիմքը՝ նրա հրապարակախօսութիւնն է, նրա քարոզած մտքերը, պաշտպանած դատերը և այն բոլորը, ինչով որ նա նպաստում է կեանքի խնդիրների և կեանքի առաջադիմութեան»։

Հէնց այդ տեսակէտով կուզէինք սկսել «Մուրճի» այս տարի լոյս տեսած երեք համարների քննութիւնը ամսագրի հրապարակախօսական բաժնից, քաղաքական և հասարակական մասերից, և այնուհետև անցնել գրական բաժնին։

Այդ նամանաւանդ անհրաժեշտ է նրա համար որ «Մուրճը» այս երեք ամիսների ընթացքում մի բացառիկ դրութեան մէջ է։ «Արծրունու մահից յետոյ, մինչև «Մշակի» վերահրատարակելը՝ «Մուրճը» մեր առաջադէմ կուսակցութեան միակ օրգանն է, որ ունի իր ծրագրի մէջ քաղաքական և հասարակական բաժիններ։

Այդ աւելորդ չէ և նրա համար, որ «Մուրճը» յաւակնութիւն ունի գլուխ կանգնելու մեր երիտասարդութեան յառաջադէմ մասի, ինչպէս այդ երևում է յօդուածների ամբողջ ոճից, կամ այսպիսի դարձուածքներից. «մեր կողմն են մեր բոլոր հասկացող և բանիբուն երիտասարդները, որոնց յոյսն և հաւատը օր աւուր աւելանում է «Մուրճի» վերաբերմամբ», կամ «անբաւականութեան («Մշակից» և առհասարակ հայ թերթերից) այդ ներքին զգացմունքի արտայայտութիւնն էր «Մուրճ» ամսագրի հիմնարկութիւնը, որից յետոյ մի քանի դէպքեր նոր կեանք տուին կուսակցական համախմբումներին հասարակական ասպարիզում»։

Իր քաղաքական բաժնում «Մուրճը» աչքից չէ թողնում համարեա թէ ոչ մի նշանաւոր երևոյթ, որ տեղի է ունեցել այս երեք ամիսների ընթացքում քաղաքական աշխարհում։ Այսպէս՝ շօշափուած են Պանամայի գործը, Ֆրանսիական մինիստրութեան փոփոխելը, Գլադստոնի իրլանդական ռէֆորմը, Կլէվլէնդի ընտրութիւնը, իտալական բանկի դատը, գերմանական զինւորական օրինագծի վիճակը և այլն։ Եւ ամեն տեղ երևում է համակրութիւն առաջադէմ ձգտումների և ընտրողական սկզբունքի աճման։ Այդ նկատմամբ վերին աստիճանի հետաքրքրական են այն տողերը, որոնց մէջ մանրամասնօրէն նկարագրուած են այն միջոցները և եռանդը, որ գործ են դնում կուսակցութիւնները ընտրողական կռիւների ժամանակ Միացեալ Նահանգներում։ «Մուրճը» առանձնապէս զբաղուել է Պանամայի դատով. այդ շատ հասկանալի է, քանի որ օտար թերթերն ևս այդ գործին երկար ու բարակ էջեր են նւիրել։ Բայց մի հայկական առաջադիմական թերթ քաղաքական երևոյթների ընտրութեան մէջ ուրիշ դիրք է բռնելու, քան թէ օտար թերթերը։

Մեզ համար մեր՝ իր առանձին բնաւորութիւն կրող կեանքի մէջ հետաքրքրական կարող են լինել երևոյթների երեք տեսակը. մէկ՝ այնպիսիները, որոնք մեր կեանքի հետ անմիջական կապ չունենալով՝ մեծ ազդեցութիւն են ունենում մարդկութեան, մասնաւորապէս Եւրոպայի ընդհանուր հասարակական վիճակի վրայ։ Դրանց հետ անհրաժեշտ է ծանօթ լինել ամեն մի կրթուած մարդու համար։ Երկրորդ տեսակի քաղաքական երևոյթներն են այնպիսիները, որոնք ինքն ըստ ինքեան շատ փոքրիկ ազդեցութիւն ունենալով քաղաքական աշխարհի ընդհանուր դրութեան վրայ, այնուամենայնիւ խրատական են մեզ համար և կրթական նշանակութիւն ունին։ Եւ վերջապէս՝ երրորդ տեսակի երևոյթներն են՝ հայոց կեանքը այստեղ կամ այնտեղ անմիջապէս շօշափող իրողութիւնները։

Այդ տեսակէտներով այս երեք ամիսների ընթացքում տեղի են ունեցել այնպիսի փոփոխութիւններ, որոնք հայ քաղաքական թերթի ուշադրութիւնը պէտք է գրաւէին։ Գլադստոնի իրլանդական և գաւառական քաղաքականութիւնը, Զւիցերիայի մաքսային կռիւը Ֆրանսիայի հետ, Չեխիայի երկու ազգութեանց կռիւները, Տաճկաստանի ներքին սուր քաղաքականութիւնը՝ մանաւանդ փոքր Ասիայի ազգաբնակութեան վերաբերմամբ, նրա մի շարք տնտեսական կարգադրութիւնները (թէկուզ երկաթուղիները), Պարսկաստանի գործերը՝ այդ բոլորը անկասկած աւելի պէտք է հետաքրքրէին մի հայ ամսագրի ընթերցողին, քան թէ օր. Պանամայի գործի ամենամանրամասն, արձանագրական նկարագրութիւնը։

Առ հասարակ «Մուրճի» քաղաքական բաժինը՝ չնայելով իր լայնածաւալութեանը՝ այժմ, երբ «Մշակը» դեռ չէ հրատարակւում, պէտք է աւելի նպատակայարմար կազմէր։

Անցնելով «Մուրճի» վերջին երեք համարների ներքին տեսութեան բաժնին, պէտք է ասել որ այդտեղ ևս չէ նկատւում իրողութիւնների որոշ ընտրութիւն։

Ռուսաց կայսրութեան ընդհանուր կեանքից ամսագիրը կանգ է առնում 1866 — 1890 Թ. ել և մուտքի 1873 Թ. ել և մտքի նախահաշւի, երկրագործական մինիստրութեան, էլևատորների, փոխատու — խնայողական ընկերութիւնների վրայ։ «Մուրճը» նշմարելի համակրանքով է վերաբերւում վերջին երեք հիմնարկութիւններին,

Արթուրմա

մանաւանդ էլևատօրին և փոխատու—խնայողական ընկերութիւններին։ Առհասարակ պէտք է ասել, որ «Մուրճը» միշտ առանձնապէս ուշք է դարձրել վարկի և մասնաւորապէս գիւղական վարկի կազմակերպութեան վրայ և այդ հարցը մշակել է խնդրի խոր ուսումնասիրութեամբ։

Խօսելով ընդհանրապէս Ռուսաստանի ներքին կեանքի վրայ՝ մենք կուզէինք գտնել մանաւանդ մասնաւորապէս Կովկասին վերաբերող կարգադրութիւնները և իրողութիւնները։ Օրինակ՝ 1893 թ. նախահաշիւը քննելիս՝ յօդւածագիրը մեզ անտեղեակ է թողնում Կովկասի համար նշանակւած մուտքից և ծախքից։ Նոյնպէս մի շարք տնտեսական նախագծների, հարկերի փոփոխութիւններ, որ չօշափում են մեր երկրի դրութիւն ևս, մնում են ոչ միայն չը բացատրւած «Մուրճի» մէջ, այլ նոյն իսկ չը յիշւած։ Իսկ հարկերի, մաքսի (Պարսկաստանի), ակցիզի պակսեցնելը կամ աւելացնելը՝ չէ՞ որ կազդի մեր ժողովրդի տնտեսական կեանքի վրայ, օրինակ աւելի քան թէ «ապահարզանի խնդիրը ուսադաւանների մէջ», մանաւանդ որ արդէն ամեն կողմերից, այն էլ զուտ հայկական նահանգներից լուրեր են հասնում թէ այս տարի սով է սկսւում, գիւղացին նոյն իսկ սերմացու չունի և այլն։ Բուն Կովկասի կեանքից վերցրած է մի դէպք—դատաստանական վերանորոգման քսան և հինգ ամեակը։

Կանգ առնենք այն համակրելի գաղափարների վրայ, որ յայտնել է «Մուրճը» էլևատորների և դատաստանական նորոգման մասին։

«Չունևոր գիւղացին երկու կերպով է վնասւում. մէկ՝ երբ պարտք է վերցնում փողով, մէկ էլ երբ ստիպւած է լինում հողի բերքը նախօրօք ծախսել»։ Այդ չարիքի առաջն առնելու համար է որ շինւում են էլևատորներ։ «Կազմակերպութիւնը այս է. շինւում են մեծ ամբարներ տէրութեան կամ մասնաւոր ընկերութիւնների կամ համայնքների հաշւով. այն ամբարները ընդունում են հողի բերքերը պահպանելու և վաճառելու համար, իսկ ապրանքատիրոջը տրւում է ապրանքի գնի մի մասը. երբ կը ծախւի ապրանքը—մնացած փողը տրւում է ապրանքատիրոջը լիովին, դուրս գալով մի որոշ տոկոս էլևատորի ծախքերի և օգտի համար։ Մի օրինակ։ Էլևատորը ստանում է մէկից 100 փութ ցորեն, ցորենի գինը շուկայում դիցուք մի ռուբլի է. այդ էլևատորը ոչ մի ռիսկ չի անում, տալով ցորենատիրոջ 70 ռ.։ Անցնում են օրեր կամ ամիսներ, էլևատորը ծախսում է 100 փութ ցորենը 110 ռ.։ Դուրս գալով ծախքը և որոշ տոկոսը՝ դիցուք 5 ռ., էլևատորը վերադարձնում է ցորենատիրոջը մնացած 35 ռ.»։ Այդպիսով ցորենատէրը ստանում է 105 ռ., իսկ եթէ էլևատորը չը լինէր, փողի կարիք ունեցող գիւղացին ստիպւած պէտք է լինէր ծախելու իր այդ ցորենը վաշխառուին կամ ցորեն հաւաքող վաճառականին 70, 60 կամ պակաս գումարով կամ պարտք վերցնել ահագին տոկոսներով։

«Մեր գիւղական և մանաւանդ նոր կազմւող գիւղատնտեսական ինտելիգենցիան առանձնապէս պէտք է իր սրտին մօտ առնի այդ խնդիրը»։

Այս տարւայ փետրւարի 19-ին կատարւած դատաստանական յոբելեանը «Մուրճը» անւանում է մտքի յաղթութեան տօն, որ պէտք է լինէր ամբողջ Կովկասի համար նշանաւոր տօն։

«Մենք չունենք երդւեալների դատարանը և ոչ էլ ընտրողական սկզբունքը... Բայց սահմանափակումները չը պէտք է բոլորովին նսեմացնեն կատարւած ռէֆորմի կարեւորութիւնը։ Բոլորովին անկասկած է որ նոր դատարանի հիմունքները և սկզբունքները, իբրև ծնունդ բարձր քաղաքակրթութեան և մարդկայնութեան, կատարեալ բարերարութիւն էին ասիականութեան և ռուսական հին, փտած, կեղծ հարստահարող ու կամայականութեան մատնւած դատական կարգերին ենթարկւած ազգերի համար»։

Հայ ամսագրի հոգին ամենալիակատար կերպով կարող է արտայայտել ի հարկէ առաւելապէս զուտ հայկական կեանքի տեսութեան մէջ։ Այդտեղ պ. Լուսինին և ինքը խմբագիր պ. Աւետիք Արասխանեանցը շարունակ կանգ են առնում ընտրողական սկզբունքի նշանակութեան և նրա գործադրութեան վրայ մեր մէջ *)։ Խօսելով թէ ինչպէս տարիների ընթացքում մեր մէջ կազմւել է յառաջադէմ կուսակցութիւնը, «վերակրթւելու», «նոր յառաջադիմութեան էլեմենտներ տալու ընդու-

---

*) «Մուրճը» մի քանի տեղ սխալմամբ յիշում է 1886 թ. Կաթողիկոսական ընտրութիւնները, փոխարէն 1885 թ. «և նախ Մելքիսեդեկի և ապա Ներսէս Վարժապետեանի ընտրութիւններին». ուզում է ասել նախ՝ Վարժապետեանի և ապա Մելքիսեդեկի ընտրութիւններին»։

նակ սերունդը», «խնդիրները աւելի լայն և աւելի՝ խոր ըմռնող երիտասարդութիւնը», ամսաթերթը մի ցանկութիւն է յայտնում—և մենք միանում ենք այդ ցանկութեան—որ դա նորանոր յաղթութիւններ կատարէ գրականութեան մէջ՝ մի կողմից, հասարակական յաջող պաշտօնավարութեան մէջ միւս կողմից, և առաջարկում է պատրաստել քաղաքային դումաների ընտրութիւնների համար։

Եւ ահա № 3-ի մէջ պ. Արասխանեանց առաջարկում է՝ մի պրօեկտ քաղաքային ընտրութիւնների համար (ազգութիւնների խնդիր)։ Այս յօդուածի մէջ նախագծում է ազգութիւնների մէջ նախնական համաձայնութիւնը կազմել հետևեալ սկզբունքներով, 1. ընտրել այժմեան իրաւասուներից նախ նրանց, «որոնք ընդհանուրից ճանաչուած են իբրև խնդիրներ ըմբռնող դատելու ընդունակ, բազմակողմանի զարգացած և խորհրդարանի յարգը զգացող և պահպանող մարդիկ են». դրանք կարող են իրար հետ «անհաշտ լինել, տարբեր ուղղութիւններ ունենալ, բայց նրանք չեն կարող իրար արժանաւորութիւնները չը ճանաչել(՞)» 2. իսկ մնացած իրաւասուների թիւը՝ դիցուք այդպիսիների թիւը 60-է, այդ թիւը պէտք է բաժանել «նայած թէ ամեն մի ազգութիւն ինչ տոկոս է կազմում քաղաքի բնակիչների մէջ» արդարութեան սկզբունքով։ «Ենթադրենք թէ այդպիսով որոշւեց 24 հայերի, 17 վրացիների, 13 ռուսների և 6 ուրիշ ազգութիւնների համար։ Ունենալով այդ թւերը իրանց ձեռքին, ամեն մի մասնաւոր կուսակցութիւն, թէկուզ դրանց թիւը ամեն ազգութեան մէջ լինի հինգ կամ տասը, պարտաւոր է իր ընտրելիների ցուցակի մէջ մտցնել նախ վերը յիշած 20 հոգու անունները, իսկ մնացեալում անպատճառ 24 հայ, 17 վրացի, 13 ռուս և 6 ուրիշ ազգութիւններից։ Այլ և այլ ցուցակների իրար հետ մօտաւորապէս հաշտեցնելը՝ կը լինի արդէն կուսակցական բանակցութիւնների գործ։ Եթէ գրուպպաների ցուցակները իրարից տարբերւում են, գրուպպաները բանակցում են, իսկ վիճելի անունների մասին վճիռը թողնում են ընտրողներին կատարել։ Այս պրօեկտի ոգով կուսակցական էթիկան պահանջում է, որ վրացիք անպայման ձայն տան 24 ընտրելի հայերից նրանց՝ որոնց անունները կան բոլոր հայ գրուպպաների ցուցակներում։ Նոյնպէս և հայ գրուպպաների բոլոր ցուցակներում պէտք է լինեն այն բոլոր վրացոց անունները, որոնց մասին վրացի բոլոր գրուպպաները համերաշխ են։ Բոլոր վիճելի անունների մասին վճռելը՝ բնական է այն կը մնայ ընտրողական ժողովին, որը վերջ ի վերջոյ տէրն է նաև բոլոր նախնական վճիռների»։

Այս պրօեկտի հիմունքների մասին կը խօսենք յաջորդ յօդուածի մէջ, որտեղ կանգ ենք առնելու առանձնապէս և «Մուրճի» գրական—գիտական բաժնի վրայ։

(Վերջը միւս անգամ)

* * *

ՖԵԼԻԷՏՕՆ

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

Վրաց հրատար. գործը.—Գրադարան ընթերցարաններ.—Դրացիները։

Ընդամենը երկու տարի է, ինչ վրացիք հիմնել են Հրատարակչական ընկերութիւն ստորին խաւերում ընթերցանութիւն տարածելու նպատակով։ Նրանք արդէն ի մօտոյ տեղեակ էին մեր Հրատարակչական ընկերութեան տասնամեայ պատմութեանը և շատ լաւ էլ նկատել էին, որ Հայոց Հրատարակչական ընկերութեան կրիայի քայլերով առաջ գնալու պատճառներից մինն էլ այն էր, որ խմբագրական մասնաժողովի անդամներ ընտրեցին «ջոջեր» և «յայտնի հին» քաղքցիներ, որոնք սրտով կպած չէին ժողովրդի մէջ էժան գրքոյկներով ընթերցասիրութիւնը տարածելու գործին. վրացիք խոյս տւին այդ տեսակներից և ընտրեցին, ինչպէս ասում է «Կւալին», ոչ թէ գրականութեան՝ մէջ յայտնի բոբոլներին (ջոջերին), այլ երիտասարդներին և չը սխալւեցին, սրանք կպան գործին տաք սրտով և ծառայեցին իրանց կոչմանը ու չը նայած որ փորձեր են լինում դրանց տապալելու, բայց ինչպէս և մեզ մօտ, դրանք անյաջող ելք են ունենում։ Ուրեմն երկու տարւայ ընթացքում նրանք հրատարակել են ժողովրդին սիրելի և յայտնի հեղինակների 39 գիրքը, այսինքն աւելի շատ քան թէ հայոց աւանդապահները 10—12 տարւայ ընթացքում։ Այդ 39-ը գրքից 21-ը մօտակայ ժամանակի հրատարակութիւններ են։

—

Գաւառներում փորձեր են լինում բանալու գրադարան—ընթերցարաններ, որի համար հայոց նման միշտ դիմում են լրագիրներին, հարուստներին, հեղինակներին ու թարգմանիչներին օգնելու իրանց կամ փողով կամ գրքոյկներով. ամեն տեղ դրամագլխի պակասութիւն է նկատւում։

Թիֆլիսում վրացիք հիմնած ունին «Վրաց մէջ կարդալ—գրել տարածող ընկերութիւն», որը պահում է 3—4 դպրոց և դրանով էլ սահմանափակւում է իւր գործունէութիւնը. պ. Ս. Ծ. «Կւալի» շաբաթաթերթի մէջ խորհուրդ է տալիս այդ ընկերութեանը զարթնել և գոնէ էժան գրքոյկներ հրատարակելով կամ դրամական նպաստներ տալով օգնել գաւառների գրադարան—ընթերցարաններին։

Անցեալ տարի յուլիսին վրաց տիկիններն ու օրիորդները Արծրունեաց նախկին քարւանսարայում հիմնեցին գրադարան—ընթերցարան, որ աչքի ընկնող կերպով առաջադիմում է։

Բացւելու օրը ընթերցարանում կար 124 գիրք, իսկ այժմ հազարին մօտ է. ընթերցարանի վճարը օրական 1 կոպէկ է, իսկ գրադարանից գիրք ստանալու ամսական 20 կ., ուսանողների համար 10 կոպ.։ Բայց ցաւելով պիտի ասել, որ մինչև օրս 2134 ընթերցողից և 240 բաժանորդից, որոնք տարել են տուն 1300 գիրք, մեծ մասը աշակերտներ և պաշտօնեայ մարդիկ են. հասարակ դաստակարգը դեռ չի ընտելացել. համարեա նոյն դրութիւնն է՝ ինչոր հայոց: Այդ գրադարանի մուտքը ծախսը չի ծածկում, ահա նորից դիմում են վրաց կարդալ—գրել տարածող ընկերութեանը, որ նա օգնութեան ձեռք կարկառէ այդ նորաբողբոջ ազգօգուտ հիմնարկութեան, և մատնացոյց են անում հայոց բարեգործական ընկերութեան վրայ, որ արդէն պարտաւորւում է նպաստելու գաւառներում բացւելիք գրադարան—ընթերցարաններին:

—

Վրաստանի շատ քաղաքներում ու գիւղերում հայերը մոռացել են իրանց մայրենի լեզուն և խօսում են վրացերէն. բացառութիւն են կազմում Ախալ Գորու հայերը: Այդ հայերը գրել-կարդալում վրացիներից յետ չեն ընկել: Դրանց մէջ կան այնպիսի երիտասարդներ, որոնք տիրապետելով հայերէնին, տեղեակ են և վրացերէնին և ահա դրանք մամուլի միջոցով փորձեր են անում հայերին ծանօթացնելու վրաց հետ: Այդ դէպքում նշանաւոր են «Մուրճ» ամսագրի արած քայլերը. այդ ամսագրում տպւել են «Կացիա Ադամեանի» և «Էլիսօ» վրաց յայտնի վէպերը ու շուտով կըսկսէ լոյս տեսնել և «Էլգուջան» յայտնի ազգասիրական վիպասանութիւնը:

Այդ հայ երիտասարդները վրացերէնից հայերէն թարգմանելով չեն բաւականանում, այլ նաև հայերէնից վրացերէն թարգմանելով. պ. Դ. Տէր-Դաւթեանը թարգմանեց և հրատարակեց անցեալ տարի Րաֆֆիի մի քանի վէպիկներ և ինչքան մեզ յայտնի է, նա պատրաստ ունի տպագրելու նաև այլ կտորներ Րաֆֆիից. սա մի ուրախալի երևոյթ է որ ծանօթանում ենք մեր դրացիների հետ, բայց ցաւալի է, որ նոյնը չի նկատւում և վրաց մէջ. համարեա չէք գտնի մի այնպիսի վրացի երիտասարդ, որ գիտենայ հայերէն և աշխատի մեզ ծանօթացնելու վրաց հետ:

Երկու դրացի ազգութիւնների մէջ թշնամութիւնը հեռացնելուն ի հարկէ քիչ չէ նպաստում և այն, որ վրաց դերասանական խմբի մէջ վրացերէն իմացող հայ երիտասարդներն ու տիկիններն են բաւականին լաւ ուժեր կազմում և Թիֆլիսի հայ բնիկ հասարակութիւնը, մայրենի լեզու չիմանալով՝ յաճախում է վրաց թատրոն:

Անցեալ անգամներ «Իվերիան» հաղորդել էր, որ Վլադիկավկազում ստացւում է 13 օրինակ Իվերիա. ստացողների մեծամասնութիւնը հայեր են, և ոչ թէ միայն Վլադիկավկազում հայերը ստանում են վրացերէն թերթ, այլ նոյնպէս և Գորիում և Քութայիսում:

ՅԱՐ. ՄԻՐԻՄ.

ՊՍՏԻ՛Կ ՓԵԼԻԷՏՕՆ

Զատիկը անցաւ, նրան հետևեց մեռելոցը: Վերջինը ես աւելի եմ սիրում քան առաջինը: Երկուշաբթի վաղ առաւօտից ես սկսեցի թափառել Թիֆլիսի գերեզմանատները, որ տեսնեմ ով ինչ ցաւ ունէ, ով ինչ անցեալ է յիշում և ով ում համար է հոգեհանգիստ կատարում:

Հաղորդում եմ ընթերցողներիս իմ տեսածները, «ֆոտոգրաֆիական ճշգրութեամբ արձանագրելով» բոլորը:

Առաջին գերեզմանատանը ես հանդիպեցի աշխոյժ երիտասարդ Պետրոս Սիմոնեանցին, որ մի խումբ սեւազգեստների հետ կանգնած էր մի գերեզմանի մօտ: Արժանապատիւ հայր Գեղամեանը հոգեհանգիստ էր կատարում երջանկայիշատակ «Միղէի» յիշատակին: Տեսարանը սրտաշարժ էր: Տիրացու Գէւօ Գէւօյիչը կրծքին ծեծում էր և գլխին հող ածում, աղաղակելով. «վա՜յ ինձ, վա՜յ ինձ» Ինքը պ. Պետրոսը այնքան վշտահար էր, որ նոյն իսկ ուշադրութիւն չը դարձրեց իր մօտ կանգնած հեւագիրներ ցրւող հրէայի վրայ, որ ձեռում բռնած էր Դորեից մի սգալից հեւագիր: Մի փոքր հեռու Միկել Անջելոյի հանճարեղ աշակերտ Ջօւանի Բաբայեանի Պալատնեանօն, մի հնադարեան ասպետական չինել ուսերին գցած, նկարում էր հանդիսաւոր տեսարանը: Նրա մօտ բացւած էր մի քելեխի սեղան, որից Ջօւանի Բաբայեանի Պալատնեանօն երբեմն հատ էր քաշում:

Թողի տեսարանը և հեռացայ սրտամորմոք: Մի քանի քայլ չանցած տեսայ մի այլ խումբ, որ շրջապատած էր մի գերեզմանաքար: Վերջինի վրայ գրւած էր. «աստ հանգչին ոսկերք անձնապան «Փորձի»: Տրտում դէմքով կանգնած էր հանգուցեալի մարդը, տիկին Մօմբաղօնի հետ թև թևի տւած: Տիրացու Փիլիպպոսը շարական էր կարդում: Յետոյ տիրացու Կօստան մի երկար դամբանական ասաց, յիշելով, ի միջի այլոց, և իր հանգուցեալ ամուսնուն և աղաղակելով. «Վա՛նիկ, Վեստանիկ, ինչու՞ ես քեզ սպանեցի»: Կօստայի խօսքը ընդհատեց տիրացու Փիլիպպոսը, որը առաջ գալով, ամպլօմբով մի ճառ արտասանեց «յաղագս ազատութեան մամուլի», Այսմաւուրքից և Մաշտոցից ցիտատներ բերելով: Վերջը նա յայտնեց, թէ հոգեհանգստից յետոյ Էդէն թատրոնում մի ներկայացում կը տրւի, ուր նախկին «Փորձի» այժմեան ղեկավարը փորձեր պէտք է անէ միսս Արբօտին յաղթելու: Իսկ տիրացու Կօստան կը ներկայացնէ «Եկեղեցական ծուխ և օսլերեալի կրթական ազդեցութ՝ւնը» վերնագրով վօդևիլը, թարգմանութիւն Աբգար Յովհաննիսեանի:

Թողի այս տեսարանն էլ ու հեռացայ, և ինչ տեսնեմ: Մի սև երես մարդ, մի մեծ գերեզմանաքարի վրայ բարձրացած, ճառ էր ասում, բացատրելով, թէ մեծ պասի օրերին ինչպէս ինքը ձիթենու հատիկներ (զէյթուն) ուտելիս փորացաւ է զգացել և ինչպէս այդ փորացաւից բարկացած նա ապտակել է իր ընկերակիցներից մէկին: «Պարոններ, պարոններ, երբէք չուտէք ձիթենու հատիկներ, եթէ ոչ մի օր դուք էլ ստիպւած կը լինէք ձեր ամենաթանգագին բանը թաղել հողում, ինչպէս ես թաղեցի այս գերեզմանում»:

Ես չը հետաքրքրւեցի իմանալ, արդեօք ինչ է թաղել այդ սևերեսը գերեզմանում: Ինձ համար աւելի հետաքրքրական էր մի ուրիշ տեսարան, որի հերոսն էր Կովկասեան հրապարակախօս, հանճարեղ ռազմագէտ և հմուտ խօլերագէտ Նիկոլայ Նիկոլաձէն: Նա վշտահար երեսը դէպի հիւսիս դարձրած էր և ձեռով ցոյց էր տալիս մի գերեզմանաքար, որի վրայ գրւած էր ռուսերէն տառերով «Տեսութիւն» (Օբզոր): Նա աղօթում էր գերեզմանի մէջ ամփոփւածի հոգու փրկութեան համար, նրա անչափ մեղքերին թողութիւն հայցելով և աղաղակելով, «Տէր, ներիր երիտասարդութեանս սխալները»:

Այդ միջոցին ականջիս հասաւ մի ձայն, որ գոչում էր. «Վրա՛լման, Վրա՛լման»։ Յետ նայեցի և տեսայ մի չալ միրուքաւոր մարդու, որ կանչում էր Վրալման ազգանունով մի սև միրուքաւոր մարդու։ Ծանօթ դէմքեր էին։ Մօտեցայ և ինչ տեսնեմ։ «Լիստօկի» ամբողջ խմբագրութիւնը մաղթանք է կատարել տալիս փոխանակ հոգեհանգստի։ Հետաքրքրւեցի պատճառը իմանալ։

«Իսկոյն կիմանաք», պատասխանեց մէկը, ցոյց տալով Վրալմանին։ Վերջինս, մի ծառի վրայ բարձրացած, ըսկսեց խօսել. «պարոններ, մենք այսօր փոխանակ հոգեհանգստի՝ մաղթանք ենք կատարելու, որովհետև «հոգի» չունենք, որին «հանգիստ» ցանկանանք, իսկ մաղթելու շատ բան ունենք։ Մաղթենք, որ մեր բազմաչարչար Իօվանէի մարմինը հանգիստ լինի»։ Այդ միջոցին ներքևից մի ձայն լսւեց, որ աղաղակում էր.

«Երբէ՛ք, երբէ՛ք, վասն զի Իօվանէի ջանը միայն գերեզմանում կը հանգստանայ»։

Ես հեռացայ տեսարանից և այնուհետև ուրիշ շատ տեսարանների հանդիպեցի։ Շարունակութիւնը եկող տարի։

ՄԱՂ.ՔՈՍ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Անցեալ երեքշաբթի, մարտի 30-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կայացաւ մեր պօլսեցի հայրենակից տիկին Այվազեանի և պ. Սանտրագօի նւագահանդէսը։ Յարգելի տիկինը, որ առաջին անգամ Թիֆլիսի հասարակութեանը Արքունական թատրոնի բեմի վրայ ներկայացաւ իտալական քաղցրահնչիւն տիկ. Մօնտի մականունով, այս անգամ բարւոք էր համարել երևան գալ իր իսկական ազգանունով։ Դուցէ հէնց հայկական ազգանունն էր ամսոյս 30-ին ժողովարանի դահլիճը դրաւել Թիֆլիսի երկու սեռի հայ պլուտօկրատիային և մասամբ ինտելիգենցիային։ Բայց և այնպէս, դահլիճը դարձեալ կիսով չափ էր միայն լիքը։ Նւագահանդէսը բաղկացած էր երկու բաժանմունքից և երկուսումն էլ երգում էին միմիայն տիկ. Այվազեանը և պ. Սանտրագօն։ Տիկինը ունէ բաւական զօրեղ բեմական սօպրանօ, որ տեղ տեղ մինչև անգամ մետաղահնչիւն է։ Սակայն ցաւելով պէտք է ասենք, որ հայ երգչուհին տակաւին այնքան չէ մըշակել այդ ձայնը, որ գրաւիչ լինէր Թիֆլիսի թէկուզ հայ հասարակութեանը, որի ճաշակը շատ քմահաճ է երգեցողութեան և երաժշտութեան վերաբերմամբ։ Նրա պիանիսիմօից զուրկ և առողջ կրծքից բղխող ձայնը երբեմն միայն սուրին նօտաներում կարողանում է ներդաշնակութիւն պահել։ Գալով բարձր նօտաներին, այստեղ աւելի զգալի է տիկնոջ կոկորդի անմշակութիւնը։ Այսպէս թէ այնպէս, տիկին Այվազեանը չէ կարող կատարելագործւած երգչուհի համարւել, գոնէ սօլօ երգելու և մանաւանդ կօնցերտների համար։ Միայն դիւր եկաւ մեզ երգչուհու մի դուէտը պ. Սանտրագօի հետ։ Սրանից մենք եզրակացնում ենք, որ դուցէ տիկին Այվազեանի ձայնը աւելի դիւրեկան հնչէ օպերային բեմի վրայ, ուր օրկեստրի բարձր հնչիւնները երբեմն ջնջում են երգչի ձայնի անհարթութիւնները։

Պ. Սանտրագօ, որ նոյնպէս, ըստ երևոյթին, հայ է, ունէ մի փոքրիկ, բայց բաւական դիւրեկան տենոր։ Նա նոյնպէս աւելի յաջող երգում է դուետ, քան թէ սօլօ։ Բայց իբրև երգիչ դարձեալ կատարելագործւած չէ, գոնէ այն չափով, որ պահանջւում է Թիֆլիսի հասարակութեան առջև երգելու համար, մի հասարակութեան, որ եթէ երբեմն շատ ներողամիտ է, շատ անգամ էլ չափից դուրս խստապահանջ է։

—

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրից իմանում ենք որ պարսկաց կառավարութիւնը առանձին գրութեամբ յայտնել է Ատրպատականի թեմի կառավարիչ Խաչատուր վարդապետին թէ իրան սխալ տեղեկութիւններ էին տւել Դերեկի վանքի պարսպի շինութեան մասին, ուստի և այդ պատճառով հրամայել էր քանդել. այժմ տեսնում է իր սխալւած լինելը և նորից իրաւունք տալիս ազատ շարունակել վանքի վերանորոգութեան գործը։

—

Ս. Արիստակէս եպ. Սեդրակեանը, ինչպէս լսում ենք, մնալու է Թիֆլիսում այլ ևս մէկ շաբաթ։

—

«Հիւսիս. գործակալութիւնը» հեռագրում է Կ. Պոլսից, որ լուր կայ թէ Անգլիան հրաւիրելու է կոնֆերենցիա Տաճկահայերի վիճակը բարւոքելու հարցի համար։ Անգլիական դեսպանը արդէն բերանացի դիմել է Բ. Դրանը, որ աւելի գթով վարւի իր հպատակ հայերի հետ։ Սևազում, Մարսւանում և Կեսարիայում տեղի ունեցող շարժումների առիթով բանտարկւած են մօտաւորապէս 1,800 հոգի։

—

Ինչպէս հաղորդում են Կ. Պոլսից, Աշըղեան պատրիարքը պատասխանելով անգլիական դեսպանին, որը հետամուտ էր լինում թէ հայ հոգևորականներից քանի հոգի են գտնւում բանտարկութեան մէջ, ասել է թէ հոգևորականներից տաճիկ կառավարութիւնը ոչ ոքի չէ բանտարկել, իսկ եթէ կան բանտարկւած մէկ երկու հոգևորական, դրանց յանցանքը ապացուցւած է։ Ժողովրդի մէջ մեծ յուզում է։

—

Ղազանի համալսարանի պրոֆ. պ. Սողոմոն Եղիազարեանը, ինչպէս հաղորդում է «Կիևսկոյէ Սլօվօ» լրագիրը, տեղափոխւում է Օդէսա, ուր ստանձնելու է պետական իրաւունքի պրոֆէսօրի պաշտօն։ Ինչպէս յայտնի է, Օդէսայումն էր մի ժամանակ և պրոֆ. Գէորգ Ղամբարեանը, որի ազդեցութեան ներքոյ Օդէսայի հայ և առհասարակ Կովկասցի ուսանողները ներկայ յատուկ գոյնը ստացան։ Յուսով ենք որ պ. Եղիազարեանն ևս կը ներգործի մեր ուսանողութեան վրայ միևնոյն ուղղութեամբ։

—

Մարտի 28-ին, Զատկի առաւօտեան վախճանւեց Թիֆլիսում Ստեփաննոս Ղամբարեանը 87 տարեկան հասակում։ Հանգուցեալը մինչև 1868 թ., մինչև դատաստանական վերանորոգումների մտնելը մեր երկրում, նահանգական դատախազ էր և այդ պաշտօնը թողեց իսկական պետական խորհրդականի աստիճանով։ Այնուհետև նա ապրում էր թէև աունձնացած, սակայն միշտ հետաքրքրւում էր երկրիս կեանքով և քաղաքականութեամբ։ Հանգուցեալն այն հազւագիւտ հայրերից էր, որոնք կարողացել են վերին աստիճանի ազնիւ և մարդասիրական ձգտումներ ներշնչել իրանց զաւակներին. Ղամբարեանի որդկերանցից աւագը՝ պ. Պօղոս Ղամբարեանը՝ ֆինանսական գիտութիւնների մագիստրոս է և այժմ կառավարիչ պետական բանկի Ռիգայի բաժանմունքի, կրտսերը՝ պ. Գէորգ Ղամբարեան քաղաքացիական իրաւունքի մագիստրոս և Մոսկւայի համալսարանի պրօֆէսօր։ Հանգուցեալի դուստրներից տ. Մարիամ Խատիսեանը յայտնի է իբրև «Հեղինէ» վէպի հեղինակ։ Ստ. Ղամբարեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ չորեքշաբթի մարտի 31-ին յարգողների և համակրողների մեծ բազմութեան ուղեկցութեամբ։ Ներկայ էին Թիֆլիսի նահանգապետ իշխ. Շիրւաշիձէն և փոխ. նահանգապետ, բարոն Տիզէնհաուզէնը։

Հանգուցեալը կտակել է 300 ռ. յօգուտ Հ. Բարեգ. ընկերութեան, 300 ռ. յօգուտ քահանաների գանձարանի և 1000 ռ. յօգուտ քաղաքիս չքաւոր դասի։ Վերջին գումարը բաժանելու է տ. Խատիսեանը իր հայեցողութեամբ, սակայն ամեն մէկ ընտանիքին ոչ պակաս քան 100 ռ., որպէս զի օգնութիւնը չքաւոր ընտանիքի համար զգալի լինի։

Ինչպէս յայտնի է, հանգուցեալի անցեալ տարի վախճանւած կինը նւիրել էր 3,000 ռ., որի տոկոսիքից մրցանակադրամ պէտք է նշանակւէր Ներսիսեան դպրոցը կամ ճեմարանը երկու տարի աւարտած երիտասարդների գրւածքների համար։ Չը գիտենք՝ ինչո՞ւ Ներս. դպր. հոգաբարձութիւնը մինչև օրս մրցանակաբաշխութեան պայմանները չէ յայտարարում։

—

Քաղաքիս մէջ լուր է պտտւում որ մօտերքումս Էջմիածնում աբեղայ են ձեռնադրւելու չորս հոգի, բոլորն էլ կրթւած երիտասարդներ, դրանց թւում և ճեմարանի ուսուցիչ աստւածաբանութեան դոկտոր պ. Արշակ Տէր-Միքէլեանը։

—

Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնները սկսւելու են մայիսի 16-ին։ Ռոստովում և Տագանրոգում նշանակւած են նոր ընտրութիւններ, որովհետև մարտին կատարւած ընտրութիւնների մէջ նկատւած են մեծ զանցառութիւններ նոր քաղաքային կանոնադրութիւնից։

—

Մտադրութիւն կայ վերացնելու կամ թէ հիմնովին փոփոխելու արհեստաւորների համքարական կազմակերպութիւնը։

—

Վճռւած էր 250 ռուս ընտանիք բնակեցնել Անդրկասպեան Գերմաբ և Կուլկուլաբ աւլների ազատ տեղերում ու այդ նպատակով ամեն մի ընտանիքին տալ 100-ական ռուբլի օժանդակութիւն։ Սակայն որովհետև այդ երկրի կառավարիչը յայտնել է որ այդ տեղերում կարող են բնակւել միայն 100 ընտանիք, կարգադրւած է որ մնացած 150 ընտանիքը բնակատեղիներ ստանան երկրի ուրիշ մասերում։

—

Պետական կալւածների նախարարութիւնը մտադիր է ներկայ թւականին շարունակել իր փորձերը բամբակի ցանքի նկատմամբ։ Այսպէս նոր ագարակներ կը հիմնւին Երևանում, որտեղ նախընթաց փորձերը աչքի ընկնող աջողութիւն ունեցան։ Նոյնպէս կը հիմնւին և Ղուբանեան և Դոնեան շրջաններում։ Բոլոր տեղերում կը ցանւի բամբակի ամերիկական Duncan Mammoth և Նոր Օրլէանեան տեսակները։

—

Յայտնի է որ միտք կար Կովկասում, մանաւանդ Սև ծովի ափերին թէյատունկեր բուսցնելու. Այժմ վճռւած է ուղարկել մի փորձւած ագրոնոմ Չինաստան, Ճապոնիա և Հնդկաստան թէյածառը մեծացնելու և պահպանելու եղանակներն ուսումնասիրելու համար։

—

Տ. Զաքէլի մարտի 19-ին նշանակւած ներկայացումը յետաձգւած էր և տեղի կունենայ երկուշաբթի ամսիս 5-ին ազնւականների բանկի թատրոնում։ Այն անձերը, որոնք տոմսակ ունեն վերցրած այն ներկայացման համար, կարող են ապրիլի 5-ին փոխել բանկային թատրոնի կասսայում։

—

Լոյս տեսաւ Գ. Միրզոյեանի և Ա. Լիսիցեանցի երկրորդ հրատարակութիւնը՝ «Վագեա», լեհական վէպիկ Կովերսկայի, թարգ. օր. Միհրուհու։ Գինն է 15 կոպէկ։

Ժամանակ. Խմբագիր
Բժ. Դ. ԼԻՍԻՑԵԱՆ.

Հրատ. Տ. Նազարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Գ. Միրզոյեանի և Ա. Լիսիցեանի
հրատարակութեամբ
Շանթ
ԼԵՌԱՆ ԱՂՋԻԿԸ
Գինն է 10 կոպ.
Դիմել „Աղբիւր—Տարազի“ խմբագրութեան

Ծախւում է Թիֆլիսի Կենտրոնական և Կովկասի ուրիշ քաղաքների գրավաճառանոցներում
ԱՏՐՊԵՏԵԱՆԻ
„ԱԼՄԱՍՏ“ վէպը Բարձր Հայոց կեանքից . . . . 2 ր.
„ԽԵՒ-ՎԱՐԱՊԵՏ“ վէպը Հայ-Կաթոլիկների կեանքից 1 ր.
„ՇՈՒՇԱՆ“ ողբերգութիւն Թրքահայերի կեանքից 1 ր.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
ԱՍՔԱՆԱԶ ՓԱՄԲԱԿԵՑՈՒ
1. Սիրոյ Պօէզիա (վէպիկ) գ. 20 կ.
2. Դագափարական օրիորդ 10 կ.
3. Ո՛վ կարդայ, նա մարդ ա 7 „
Դիմել Тифлисъ, Книжный магазинъ Хидїекель.
2—1.

Поступили въ продажу слѣдующія книги:

Совѣты матерямъ или необходимыя наставленія беременнымъ и роженицамъ и родильницамъ съ присовокупленіемъ первыхъ правилъ физическаго воспитанія дѣтей и ухода за больными дѣтьми. составилъ докторъ медицины М. фонъ-Дейгъ, съ рисунками и календаремъ беременности, цѣна 2 р.

Поваренная книга для молодыхъ хозяекъ, скоромный и постный домашній столъ; въ книгѣ находится 477 блюдъ и 366 обѣдовъ, каждый изъ 4-хъ блюдъ, объясненія, какъ приготовлять обѣды, пасхи, куличи, варенья, соленья, и мориновапія, квасъ Шпекъ и сало для шаренья, коптить и солить рыбу и мясо, а также средства предохранять провизію отъ порчи, составили А. Толивѣрова и А. Сальникова, ц. 2 руб. съ пересылкой.

Столярное искусство, съ 150-ю рисунками и многими чертежами, составилъ К. Ленцингъ, издан. 2-е, ц. 2 р. 50 к. съ пересылкой.

О тѣлесныхъ и душевныхъ болѣзняхъ, происходящихъ отъ онанизма и лѣченіе ихъ помощію правилъ гигіеническихъ и холодной воды, составилъ докторъ И. Краснопольскій, изд. 2-е, ц 2 р. съ пересылкой.

Сперматорея, или описаніе вреднаго вліянія потери плодотворной влаги на здоровье человѣка, и болѣзней отъ того происходящихъ и способы лѣченія оныхъ, составилъ докторъ медицины Х. Иноенсъ, 2 т. издан. 2-е, съ рисунк., ц. 3 р. съ пересылкой.

Мужское безсиліе или неспособность къ брачному сожитію, потеря соковъ, мѣстныя страданія, зараженія, хилость, происходящая отъ злоупотребленія вредными лекарствами, сперматорея, и половое безсиліе-радикальное леченіе этой болѣзни, сочиненіе доктора медицины І. Шиллинга съ приложеніемъ примѣровъ изъ медицинской практики доктора медицины И. Лей издан. 2-е, съ рисунк ц. 2 р. съ пересылкой.

Объ онанизмѣ и безсиліи; о средствахъ снова возстановлять и укрѣплять здоровье разстроенное онанизмомъ и безсиліемъ, сочиненіе А. Брауна издан. 2-е, ц. 2. р. съ пересылкой.

Практическое руководство къ познанію лошади по наружному ея осмотру составилъ Ф. Руттенбергъ, съ 171 рисункомъ и многими таблицами издан. 3-е, ц 2 р. 50 к съ пересылкой.

Собраніе множества чудесныхъ и непостижимыхъ фокусовъ, для легкаго представленія каждому въ домашнемъ кругу, составилъ профессоръ Жанъ Мартиньо, ц. 1 р. 50 к. съ пересылкой.

Возраженіе организма, безсиліе и безплодіе, зависящее отъ преждевременнаго истощенія, онанизма, трипера, суживанія мочеваго канала, страданій мужскихъ и женскихъ; леченіе венерическихъ болѣзней, ихъ радикальное излеченіе и предохранительныя противъ нихъ мѣры и возстановленіе способностей къ зачатію младенца — сочиненіе доктора медицины, хирургіи и акушерства А. Штенбахера съ атласомъ рисунковъ, ц. 4 р. съ пересылкой.

„Геморой", коренное уничтоженіе болѣзни во всѣхъ ея видахъ и измѣненіяхъ новыя медицинскія и гигіеническія средства, сочиненіе доктора медицины К. Лебедя, издан. 2-е ц. 1 р. съ пересылкой.

Практическія врачебныя наставленія вступившимъ въ бракъ, содержащія въ себѣ правила для сохраненія физическихъ способностей въ брачной жизни до глубокой старости съ присовокупленіемъ описанія половой жизни женщины, сочиненіе доктора медицины и профессора Рудольфа Фернау съ рисунками, издан. 4-е, ц. 1 р. 50 к. съ пересылкой.

О половомъ отправленіи съ присовокупленіемъ подробнаго описанія радикальнаго леченія полового безсилія, являющагося вслѣдствіе поллюцій, онанизма, невоздержности, нѣкоторыхъ болѣзней и многихъ другихъ причинъ — составилъ докторъ Рубо, ц. 2 р. съ пересылкой.

Опытный врачъ секретныхъ болѣзней, настольная книга для молодыхъ людей, содержащая въ себѣ ученіе венерическихъ болѣзней, онанизма, трипера, мужского безсилія и женскаго безплодія и прочихъ болѣзней половыхъ органовъ, составилъ докторъ медицины В. Новиковъ, издан. 3-е, въ 3 част., ц. 2 р. съ пересылкой.

Врачъ-совѣтникъ и руководитель для супруговъ и вообще для молодыхъ людей, содержащій въ себѣ: анатомическое описаніи мужскихъ и женскихъ производительныхъ частей, ихъ развитіе, предназначеніе и с образныя съ природою измѣнені исполненіе половыхъ отправлені брачная жизнь, любовь внѣ бра несовершенное приготовленіе сѣм ни, безсиліе и безплодіе, разслаб ніе нервъ, бѣли, неправильныя м сячныя очищенія и поллюціи съ по казаніемъ средствъ къ отвращені этихъ недуговъ и къ сохранені производительной силы до глубок старости, а также къ уничтожені гибельныхъ послѣдствій онанизма къ доставленіи истощившимъ се этимъ порокомъ прежняго цвѣт щаго здоровья, составилъ доктор медицины Ф. Вейсъ, издан. 2-е ц. 2 р. съ пересылкою.

О физическихъ супружескихъ отно шеніяхъ мужчины и женщины с показаніемъ наставленій, какъ муж и жена должны вести себя въ это случаѣ безъ вреда своему здоровь составилъ докторъ медицины Браунъ, издан. 2-е ц. 2 р. 50 съ пересылкою.

Искуство не учась живописи бе живописцемъ, художникомъ, фо графомъ и рисовальщикомъ, съ зе каломъ для рисованія и многими т. С. П. Б ц. 2 р. съ пересылко

Испытанныя средства, служащія д сохраненія волосъ, прекращающ вылѣзаніе ихъ и способствующ рощенію и покрытію голыхъ мѣс новыми волосами, съ присовокупл ніемъ сверхъ того средствъ отъ б родавокъ, веснушекъ, жолчныхъ родимыхъ пятенъ, составилъ К Дебуа, издан. 2-е, ц. 1 р. съ пере сылкою.

Практическое руководство кройки шитья женскаго платья для сам ученія по вновь изобрѣтенной, вес ма простой и вѣрной системѣ, с рисунками, въ 3 ч. ц. 1 р 50 к съ пересылкою.

Съ требованіями этихъ книгъ п иногородные благоволятъ обращат ся исключительно на имя Христоф Ивановича Патрова С.-Петербургъ, Пе тербургской части, по Стрѣльни ской улицѣ, домъ № 10, не Петро ву, а Патрову.
1-

—

Дозв. ценз. 3 Апрѣля 1893 г. Тифлисъ Типографія Груз. Изд. Т—ва.